ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԿԱՐՄԵԼԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՈՐԴ ՀԱՅՐ ՈՒԳՈՆԵԻ (ՀՅՈՒԳՈ) ԶԵԿՈՒՅԱԳԻՐ-ՆԱՄԱԿԸ (1709 Թ. ԱՊՐԻԼԻ 2) ՀՌՈՄԻ ՀԱՎԱՏԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ

Նոր Ջուղայի հայության շրջանում XVII դարավերջին և հաջորդ դարասկզբին կաթոլիկ քարոզիչների գործունեության մասին պահպանվել են բազմաթիվ սկզբնաղբյուրներ՝ ուղեգրություններ, արխիվային վավերագրեր, հուշագրություններ[1]: Այդ վավերագրերի շարքից է Նոր Ջուղայի կարմելիտների[2] առաջնորդ հայր Ուգոնեի (Հյուգո)[3] 1709 թ. ապրիլի 2-ի նամակը ուղղված Հռոմի Հա-

[1] Նոր Ջուղայի XVII-XVIII դարերի պատմության վերաբերյալ խիստ շահեկան են Էլիզաբեթ Թաջիրյանի աշխատությունները: Դրանք սկզբնաղբյուրային նշանակություն ունեն, քանզի պարունակում են եվրոպական աղբյուրներից հայերեն քաղվածո թարգմանություններ՝ արժեքավոր ծանոթագրություններով (Թաջիրյան Է., Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, Երևան, 2012: Նույնի՝ Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17-18-րդ դարերում, մաս II, Երևան, 2017:

[2] Կարմելիտների միաբանությունը ստեղծվել է XII դ.: Անվանումը կապված է Իսրայելի հյուսիս-արևմտյան մասում գտնվող Կարմելոս լեռան հետ, որի վրա հիմնվել է միաբանությունը:

[3] Հայր Ուգոնեն, իբրև «նահանգային փոխանորդ», Իրանում ծառայել է 1705-1708 թթ. (A Chronicle of the Carmelites in Persia and the papal Mission of the XVIIth and XVIIIth centuries, vol. 2, London,

վատի տարածման միաբանությանը (Propaganda Fide): Նամակի գլխավոր նյութը վերաբերում է Նոր Ջուղայում կարմելիտ քարոզիչների գործունեությանը: Վավերագիրը, միաժամանակ, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում XVII-XVIII դդ. հայ ազատագրական պայքարի նշանավոր ղեկավարներից Իսրայել Օրու 1708 թ. պարսկական դեսպանագնացության և նորջուղայեցի հայ կաթոլիկ Շեհրիմանյանների նշանավոր վաճառականական տոհմից Մուրադի որդի Նազարի գործունեության մասին[4]:

Նամակը գրված է հին իտալերենով, բնօրինակը պահվում է Հռոմի Հավատի տարածման միաբանության

1939, p. 726, 730-731): Նրան, որպես «նահանգային փոխանորդ», 1708 թ. հոկտեմբերից հաջորդել է հայր Ժոզեֆը: Թերևս դա է պատճառը, որ խնդրո առարկա նամակում Ուգոնեն ներկայանում է միայն որպես Նոր Ջուղայի առաջնորդ (A Chronicle of the Carmelites in Persia and the papal Mission of the XVIIth and XVIIIth centuries, vol. 2, p. 731):

[4] Իսրայել Օրու գործունեության մասին մասնրամասն տե՛ս Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1957: Շեհրիմանյան տոհմի գործունեության մասին տե՛ս Խաչիկյան Շ., Շեհրիմանյանց ընկերության առևտրատնտեսական գործունեության մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 9, էջ 57-63: Aslanian S., From the Indian Ocean to the Mediterranean The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, University of California Press, 2011, pp. 149-158. Նազար Շեհրիմանյանի գործունեության մասին տե՛ս Թաջիրյան Է., Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, էջ 84-88:

արխիվում[5]: Մաշտոցյան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում գտնվում է վավերագրի լուսապատճենը՝ թղթապանակ 262, վավերագիր 102ա, և դրա մեքենագիր տարբերակը՝ 102բ:

Նամակին կցված է նաև Հռոմի Հավատի տարածման միաբանության արխիվի 1710 թ. մեկ այլ վավերագիր, որի համաձայն՝ հայր Ուգոնեի նամակը քննարկվել է միաբանության՝ նույն թվականի օգոստոսի 1-ին տեղի ունեցած գլխավոր ժողովում[6]: Վավերագրում հականե անվանե նշված են ժողովի մասնակիցները: Այս վավերագրի հայերեն թարգմանությունը ևս առկա է սույն հրապարակման մեջ:

Նոր Ջուղայի կարմելիտների առաջնորդ հայր Ուգոնեի խնդրո առարկա նամակը հատվածական թարգմանությամբ հրատարկել է Հարություն Քյուրդյանն իր «Իսրայէլ Օրի. պատմաքննական ուսումնասիրութիւն» մեծարժեք աշխատությունում[7]: Նա նույն աշխատության մեջ թարգմանաբար հրապարակել է նաև Հռոմի Հավատի տարածման միաբանության արխիվի 1710 թ. նշյալ

---

[5] Sacrae Congregationis de Propaganda Fide, 1669-1760, vol. 573, p. 48.

[6] Հայտնի է, որ կաթոլիկ քարոզիչների՝ առաջնահերթ կարևորության տեղեկագիր նամակներն ամեն ամիս քննարկվել են Հավատի տարածման միաբանության ընդհանուր ժողովում: http://www.-archiviostoricopropaganda.va/content/archiviostoricopropagandafide/en/archivio-storico/fondi-archivistici.html 01.02.2024

[7] Քիւրտեան Յ., 1960, Իսրայէլ Օրի. պատմաքննական ուսումնասիրութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, էջ 171-172:

վավերագիրը: Հարություն Քյուրդյանի թարգմանությունից դուրս են մնացել Ուգոնեի նամակի մի քանի կարևոր հատվածներ, հատկապես՝ Նազար Շեհրիմանյանին վերաբերող տեղիները, դավանափոխության, մուսուլմանների շրջանում քրիստոնեության տարածման մասին վկայությունները, ինչպես նաև Հավատի տարածման միաբանության ժողովի մասնակիցների անունները: Այս ամենը հաշվի առնելով՝ սույն հրապարակմամբ ներկայացնում ենք նշված վավերագրերի հայերեն ամբողջական թարգմանությունը՝ համապատասխան ծանոթագրություններով:

Հռոմի Կղեմես VIII պապի (1592-1605) նախաձեռնությամբ կարմելիտ քարոզիչները 1604 թ. հաստատվեցին Իրանում: Իբրև պապական աթոռի և եվրոպական պետությունների բանագնացներ՝ նրանք հանձնառություն ունեին նպաստելու Սեֆյան Իրանին հակաօսմանյան դաշինքում ներգրավելու գործին[8]: Հռոմի պապական աթոռի քարոզչությունն Իրանում ընդլայնվեց թուրք-իրանական պատերազմների ժամանակ (1512-1639), երբ Արևմուտքը, օգտվելով նպաստավոր իրավիճակից, որոշեց Արևելքում ամրապնդել իր ներկայությունը: Եվրոպական պետությունները և նրանց հետ գոր-

[8] A Chronicle of the Carmelites in Persia and the papal Mission of the XVIIth and XVIIIth centuries, vol. 1, London, 1939, pp. 68-104. “Carmelites in Persia”, Encyclopædia Iranica https://iranicaonline.org/articles/carmelites-in-persia 24.01.2024

ծակցող Հռոմի պապական աթոռը ձգտում էին իրենց ազդեցությունը հաստատել Արևելք-Արևմուտք միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիների վրա: Արևելքի անզեն նվաճումը կաթոլիկ Արևմուտքն իրականացնում էր մի քանի ճանապարհով: Դրանցից էր Սեֆյան և Օսմանյան տերությունների քրիստոնյա ժողովուրդների շրջանում կաթոլիկության տարածումը, որի համար պարարտ հող էին ստեղծում նրանց դեմ մուսուլման տիրապետողների հալածանքներն ու հարստահարությունները:

Միսիոներական առաքելությունները նաև նպատակ ունեին պաշտպանելու եվրոպական երկրների առևտրատնտեսական շահերը: Ուստի ամենևին պատահական չէ, որ դրանց մասնակցում էին նաև եվրոպացի առևտրականներ, իսկ քարոզչական կենտրոնները մեծ մասամբ հիմնվում էին առևտրական մայրուղիների վրա գտնվող բնակավայրերում: Լինելով վաճառաշահ կենտրոն՝ Նոր Ջուղան գրավում էր Հռոմի պապական աթոռի ազդեցությունն այնտեղ ամրապնդել ջանացող միսիոներների ուշադրությունը:

ԱՆԻ Ա. ՊԵՏՈՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի

կրտսեր գիտաշխատող

ani.petoyan@yahoo.it

ID 0009-0004-4736-2479

DOI:

Հավատի տարածման Սրբազան միաբանության արխիվ, գրություններ ընդհանուր ժողովներից, 1710 թ., հատոր 573, թերթ 47-48:

Գերապայծա՛ռ և ամենապատի՛վ Տեր[9]

Քանի՛ որ պարտավորություն ունենք ամեն տարի ինչ որ կերպ նպաստելու մեր առաքելությանը, տեղեկացնում եմ Ձերդ գերազանցությանը, որ լավագույնը, ինչ այս պահին անում ենք Ջուղայում, աղքատներին կրթելն է[10]: Նրանց մեծ մասը շիզմատիկների (հերձվածողների, նկատի ունի՝ Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալներին – Ա.Պ.) երեխաներն են՝ թվով հարյուրը: Նրանք ամեն կիրակի գալիս են օգնություն ստանալու: Յուրաքանչյուրին տալիս ենք մեկ բայոկո[11], որը, սակայն, չի տրվում մինչև նրանք բարձրաձայն չաղոթեն: Նրանց ուսուցանում ենք քրիստոնեական հավատի դրույթներ, որոնք պարտադիր է իմանալ առողջական կարիքների համար: [Դա արվում է] խոստովանության և

---

[9] Նկատի ունի Հռոմի Կղեմես XI պապին (1700-1721):

[10] Կաթոլիկության տարածման համար կարմելիտներն օգտագործում էին բազմաթիվ միջոցներ՝ ֆինանսական օժանդակություն, կրթություն, հիվանդների խնամք և այլն (Azam Fooladi_Panah, Jamal Moosavi, Missonary Activities of Carmelites under Coverage of Medical Services in Safavid Period, “The Journal of Research on History of Medicine”, vol. 9, Issue 1, 2020, pp. 35-42):

[11] Արծաթե դրամ, որը շրջանառության մեջ է դրվել XV դ.: https://en.moneterare.net/baiocco-coin/ 24.01.2024

հաղորդության միջոցով[12]՝ ուսուցանելով նրանց, որ չկա այլ [արժեք], քան եկեղեցին և Քրիստոսը: Լինելով Քրիստոսի ճշմարիտ աշակերտ՝ կարևոր է հավատալ այն եկեղեցուն և այն ամենին, ինչ նա պատվիրում է, [որոնց] մենք ընդհանրապես հավատում ենք: Հարկ չեմ համա-

[12] Հաղորդության և խոստովանության մասին հայր Ուգոնեի հիշատակումը դավանափոխության աներկբա վկայություն է: Հայոց եկեղեցին, ի դեմս Ամենայն հայոց կաթողիկոսության, հետևողական պայքար էր մղում կաթոլիկ քարոզչության դեմ ինչպես Հայաստանում (թե՛ Արևմտյան, թե՛ Արևելյան), այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվող հայկական համայնքներում: Այսպես՝ Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսը (1706-1714), մտահոգ լինելով Նոր Ջուղայում կաթոլիկության տարածմամբ, դիմում է Իրանի շահ Սուլթան Հուսեյնին՝ խնդրելով սահմանափակել պապական քարոզիչների գործունեությունն իրանահայության շրջանում: Սուլթան Հուսեյնը (1694-1722) բավարարում է կաթողիկոսի խնդրանքը՝ 1710 թ. հրապարակելով հրովարտակ, որը կաթոլիկներին արգելում էր դավանափոխ անել Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալների երեխաներին, ինչի մասին հստակ վկայություն կա քննության առարկա նամակում (Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), կազմեց Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, էջ 160-161): Շահական այս հրովարտակի մասին վկայում է նաև Սիմեոն Երևանցին. «Շահ Հիւսէյինի ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ վասն ֆռանկաց, թէ մի երբէք երևեսցին յիշխանութեանս իմում և ոչ զօրէնս իւրեանց ուսուսցեն և կամ հրաւիրեսցեն զոք ի յաղանդս իւրեանց մի զմանկունս ուսուսցեն և ի հայոց զկանայս մի առցեն և այլ այսպիսիք պատուէրք ի ՌՃԻԲ. (1710) թուին տաճկաց: Գի՛տ ցուցական և... համարովն» (Սիմեոն Երեւանցի, Ջամբռ, աշխատասիրությամբ Հրանտ Օհանյանի, Տնտեսական պատմության վավերագրեր, հ. Ե, Երեւան, 2022, էջ 257-258):

րել շիզմատիկների երեխաների հետ այս կետից առաջ գնալ՝ թողնելով նրանց իրենց հավատի պարզության մեջ: Այս տարբերակն ավելի շահավետ է և չի կարող տհաճություն պատճառել որևէ մեկին: Այս ամենն ավելի հաճելի է շիզմատիկներին, քան կաթոլիկներին, որոնք հաճախ գալիս էին իրենց երեխաների հետ:

Աղքատների պահանջները լսելու և նրանց կարիքները բավարարելու համար ինձ տրվել է ժամանակ, և հուսով եմ՝ Աստծո շնորհիվ կարճ ժամանակում կգտնեմ կայուն միջոցներ:

Վեց ամիսների ընթացքում մկրտել ենք վեց մահամերձ մուսուլմանների երեխաների, որոնցից միայն մեկն էր տկարամիտ: Նա առայժմ գտնվում է իր՝ ծայրահեղ աղքատ հարազատների հոգածության ներքո, և երբ փոքր ինչ մեծանա, գաղտնաբար կփախցնենք նրանց ձեռքից՝ տանելով անվտանգ մի վայր, որտեղ կուսուցանենք մեր սուրբ կրոնը և դարձի կբերենք դեպի քրիստոնեություն:

Ձերդ Գերազանցությանը պետք է տեղեկացնեմ, որ պարսից թագավորի ենթակայության տակ գտնվող մի հայ[13], ծնված Գիլանի շրջանում, ներկայանալով դես-

[13] Խոսքը վերաբերում է Իսրայել Օրուն: Հայր Ուգոնեի զեկուցագիր նամակն ուշագրավ տեղեկություններ է պարունակում Իսրայել Օրու 1708 թ. պարսկական դեսպանագնացության մասին: Աշոտ Հովհաննիսյանը կարմելիտների «Ժամակագրություն»-ից ծանոթ է Օրու մասին հայր Ուգոնեի հայտնած տեղեկություններին, որոնք քննել է իր մեծարժեք աշխատության մեջ (Հովհաննիսյան Ա.,

պան, ապրաքի համար առանց մաքս վճարելու, Հռոմի պապի դրոշով եկել է և հայտնել, որ կաթոլիկ եկեղեցին պետք է վերամիավորվի Հայոց եկեղեցուն:

Այժմ այս տգետ և նսեմ անձը, որը ոչ մի կարևորություն չի ներկայացնում, արժանացավ միսիոներների դատին, և քանի որ նրա նամակները կեղծ են ու շինծու՝ նա արհամարհվեց կաթոլիկներից՝ փոխարենն արժանանալով շիզմատիկների համակրանքին: Նրանց մեծ տոնին իր մարդկանց հետ այցելելով արքեպիսկոպոսական եկեղեցի՝ Օրին ֆրանկի զգեստով հաղորդվեց՝ Ձերդ Սրբազնության դրոշը եկեղեցու դռանը դնելով: Ձերդ Գերազանցությունը թող դատի այս միջադեպը, որը տեղի ունեցավ կաթոլիկների մոտ[14]:

Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, էջ 577-578):

[14] Կաթոլիկ քարոզիչները խիստ անհանգստացած էին Իսրայել Օրու պարսկական դեսպանագնացությամբ, ուստի ամեն կերպ փորձում էին խոչընդոտել այն՝ չխուսափելով անգամ նրան վատաբանելուց ու պարսկական իշխանությունների մոտ նսեմացնելուց: Իսրայել Օրին, իր դեսպանագնացության վերաբերյալ կասկածներ չհարուցելու համար, Կղեմես XI պապից ստացել էր Իրանի շահին հասցեագրված 1705 հուլիս թվակիր նամակ, որով Հռոմի քահանայապետը հայտնում էր որ Օրին վայելում է իր վստահությունը: Սակայն Կղեմես XI-ը, ստանալով Շամախիում գործող եզուիտ քարոզիչ Հայր Շապիոնի նամակը, ըստ որի՝ Իսրայել Օրին ոչ թե Հայոց և Հռոմի կաթոլիկ եկեղեցիների միության կողմնակից է, այլ՝ հակառակորդ, անգամ պնդում է, որ Հայոց եկեղեցին պետք է արգելի հայերին՝ միանալու կաթոլիկ եկեղեցուն՝ անմիջապես նամակ է գրում Իրանի շահին՝ հայտնելով, որ այլևս չի սատարում նրան: Իրանում գտնվող ֆրանսիացի բանագնաց ոմն Միքայել

Բացի այդ, մի աղքատ քրիստոնյա (անունն այստեղ չեմ նշում, քանի որ նամակը կարող է հայտնվել անհավատների[15] ձեռքում), թուլամտության պատճառով դառնալով մուսուլման, փորձել է վերադառնալ կաթոլիկությանը: Միսիոներների խնդրանքով նա ապաստան հայցեց դեսպանից[16], որպեսզի թուրքերը չկարողանան իրեն հալածել: Նա (Իսրայել Օրին-Ա.Պ.) խոստացավ պաշտպանել նրան, իսկ հետո թուրքերի առաջին իսկ պահանջով հանձնեց նրանց: Այս բոլոր արարքների համար նա պետք է պատժվի, եթե համարձակվի Հռոմ գալ և բացատրություն ներկայացնել «իր գեղեցիկ առաքելության համար»[17]: Նրա անունն Իսրայել Օրի է, որը եղել է Ֆրանսիայի զինվոր:

անգամ լուրեր էր տարածում, որ Իսրայել Օրու անունը գաղտնագիր է, որը նշանակում է՝ «Նա կլինի թագավոր» “Il sera roi” (A Chronicle of the Carmelites in Persia..., p. 565-567): Այդպիսով նա փորձում էր պարսկական իշխանություններին հավաստիացնել, թե Օրու գլխավոր նպատակը հայկական թագավորության վերականգնում է: Հռոմի պապից Օրու ստացած նամակն ամենևին կեղծիք չէր: Կաթոլիկ քարոզիչներին, պարզապես, խստորեն անհանգստացրել էր Հայ Առաքելական եկեղեցում նրա հաղորդություն ստանալը: Հռոմի պապից Իսրայել Օրու ստացած նամակի, նրա պարսկական դեսպանագնացության մասին վկայող վավերագրերը տե՛ս նաև Քիւրտեան Յ. Իսրայէլ Օրի, էջ 151-180:

[15] Նկատի ունի մուսուլմաններին:

[16] Նկատի ունի Իսրայել Օրուն:

[17] Չակերտներում դրված հատվածը թարգմանում ենք բառացի: Ուգոնեն նկատի ունի Իսրայել Օրու՝ վերոնշյալ քայլերը:

Մի քանի ամիս առաջ էր, որ պարոն Նազար Շեհրիմանն ինձ խնդրեց տալ դրական բնութագրով մի վկայագիր: Ես դա արեցի և ստորագրելու տվեցի եպիսկոպոսի ընդհանուր փոխանորդին: Այս հանգամանքը մեծ մտահոգություն պատճառեց նրանց, որոնք անհամաձայնություն ունեին պարոն Նազարի հետ և ասում էին, որ նա վերը նշված վկայագիրն ուղարկել է Սրբազան միաբանություն, որպեսզի ականավոր կարդինալներն անցնեն իր կողմը: Նրանց հանդարտեցնելու և կողմնակալություն չցուցաբերելու համար՝ խոստացա, որ առաջին իսկ հնարավարության դեպքում, երբ պատիվ ունենամ գրելու Ձերդ Գերազանցությանը, կտեղեկացնեմ, որ վերը նշված վկայագիրը երբեք ուղղված չի եղել դատական այն վեճին, որ պարոն Շեհրիմաններն ունեն Հռոմի դատարանում[18]: Աստծո կամոք թող այս վեճը շուտ ավարտ-

[18] Պֆալցի կյուրֆյուրստ Հովհան Վիլհելմին հղած 1699 թվակիր նամակում Իսրայել Օրին, խոսելով Իրանից Վենետիկ տեղափոխված հայ մեծահարուստ Շեհրիմանյանների մասին, հայտնում է, որ նրանք փորձել են դատական ճանապարհով հետ ստանալ կես միլիոն ֆլորին արժողությամբ մի կալվածք (Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, էջ 384): Պնդելի է, որ նամակում հիշվում է հենց այս դատական վեճը, որը, ըստ հայր Ուգոնեի, բացասական ազդեցություն է ունենում Նոր Ջուղայում իրենց առաքելության վրա: Վավերագրին կցված է նաև Նազար Շեհրիմանյանին տրված վկայագիրն ստորագրած մագիստրոսների ու կարդինալների հավաստիացումն առ այն, որ նա, ընտանյոք հանդերձ, ջերմեռանդ կաթոլիկ է և չի ձգտում անարդար շահի: Ենթադրել կարելի է, որ Նազար Շեհրիմանյանի հակառակորդները կասկածի տակ են դրել նրա կաթոլիկադավան

վի, քանի որ այն մեծ խոչընդոտ է, որը, [սակայն], չի կարող կարևոր ազդեցություն ունենալ մեր սուրբ կրոնի տարածման ընթացքի վրա. առաջինը, որ չենք կարողանա գնալ [Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների] տներ, կամ երեխաներին կրթել, կամ այցելել հիվանդներին, կամ տալ որոշ հոգևոր ցուցումներ՝ առանց կասկած և անվստահություն հարուցելու վիճաբանող կողմերի շրջանում: Այս ամենից զատ, մեծ մասն ունի մի շատ վատ սկզբունք. երբ նրանք վիճում են, չպետք է գան խոստովանության՝ ասելով, որ վեճը թշնամություն է առաջացնում, իսկ դա թույլատրված չէ խորհուրդներով: Եվ շատերն այս պատրվակով խուսափում են զատկական հաղորդությունից՝ հաշվի չառնելով, որ մենք ասում ենք հակառակը: Ահա այսպիսի առաքելությամբ ենք առաջնորդվում Ջուղայում, որի հիմքում Ձերդ Գերազանցության խորհուրդներն են: Եվ վերջում՝ համբուրում եմ Ձեզ ամենայն ակնածանքով:

Ջուղա, 2 ապրիլի, 1709 թ.

լինելը: Վավերագրի այս հատվածը, ինչպես նաև Հավատի տարածման միաբանության 1710 թ. օգոստոսի 1-ին տեղի ունեցած ժողովի մասին տեղեկությունը լատիներեն են, որոնց թարգմանության համար շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի «Թարգմանական մատենագրության» բաժնի վարիչ, բ.գ.դ. Գոհար Մուրադյանին:

Ամենախոնարհ եւ նվիրյալ ծառա, Ջուղայի Սուրբ Դիոնիսիոսի (կարմելիտների) փոխանորդ՝ եղբայր Ուգոնե:

Թերթ 49: Մենք՝ ներքոստորագրյալներս, վկայում ենք, որ այդ Նազար Շեհրիմանը, ողջ ընտանիքով հանդերձ, ոչ միայն կաթոլիկ դավանանքն է քարոզում՝ ամենաջերմեռանդ խրատով, այլև դրա կողմնակիցն է, ինչպես նեցուկ և գլխավոր սյուներից մեկը: Նշված պարոնի խոսքերից միշտ հասկանալի է եղել, որ ինքը հավատարիմ է ճշմարտությանը, օժտված է աստվածավախ խղճով և ծարավ չէ անարդար շահի:

Ուրիշ ոչինչ չի պահանջում մեզանից պարոն Նազարը, և ոչ մի այլ բանի տակ չենք ստորագրում, քան վերը շարադրվածը:

Հավատի տարածման Սրբազան միաբանության արխիվ, գրություններ ընդհանուր ժողովներից, հատոր 80, թերթ 343, 350– 51:

Թերթ 343: Հավատքի տարածման գլխավոր ժողովում, որ տեղի է ունեցել 1710 թ. օգոստոսի 1-ին՝ ժամը 12:00-ին, ներկա էին գերապատիվ մագիստրոսներ և սրբազան հայրեր հետևյալ կարդինալները. Սպադա, դե Աբդուա, Սակրիպանդես, Պրաֆակտուս, Սանկտակրուչիուս, Գաբրիելիուս, Աքուավիվա, Վալեմանուս, Կապ-

ռարա, Դելատրամոիլե, Ֆաբրոնուս, Գազադինուս, Իմ-պերիալիս եւ Բարբերինուս:

Թերթ 350, **համար 16**: Սուրբ Դիոնիսոսի փոխանորդ, Ջուղայի բոկոտն կարմելիտ հայրերի առաջնորդ հայր Ուգոնեն 1709 թվականի ապրիլի 2-ի թվակիր նամակով, որը հասել է մի քանի օր առաջ, Ձերդ Գերազանցությանը տեղեկացնում է խմբերի (նկատի ունի միաբաններին-Ա.Պ.) մասին, որոնք ի սրտե իրենց կրոնական բարեգործությունն են անում՝ մասնավորապես ամեն կիրակի կրթելով շիզմատիկ աղքատ հայերի երեխաներին, որոնք թվով միշտ հարյուրն են: Նրանցից յուրաքանչյուրին տրվում է մեկ մետաղադրամ, որն օգնություն է ազգային կաթոլիկներից[19]:

Թերթ 351: Տեղեկացնում է նաև միսիոներիներին և այլ կաթոլիկներին հայ շիզմատիկ Իսրայել Օրու պատճառած վնասների մասին, որը փորձում է իր ֆրանկական ապրանքը մտցնել Պարսկաստան՝ թագավորին (շահին – Ա.Պ.) ներկայանալով իբրև Հռոմի պապի դեսպան: Ինչպես նաև ասել է, որ ունի նամակներ [պապից], որոնք միսիոներները կեղծ են համարում՝ կապելով տվյալ ստոր և տգետ անձի հետ: [Ուգոնեն] խորհուրդ է տալիս իր արարքների համար պատժել վերոնշյալ Իսրայելին, եթե նա երբևէ գա Հռոմ:

Ձերդ Գերազանցությանն ըստ կարգի պետք է տեղեկացնեմ, որ կեղծ դեսպանի (Իսրայել Օրու – Ա. Պ.) խա-

[19] Նկատի ունի հայ կաթոլիկներին:

բեության մասին հակիրճ ներկայացվել է Ձերդ Սրբազ-նությանը 1709 թ. նոյեմբերի 12-ի նամակով: Կոստանդ-նուպոլսում Ֆրանսիայի դեսպանից տեղեկանում ենք, որ քրիստոնյա թագավորի[20] ներկայացուցչի միջոցով [ծանուցում[21]] է ուղարկվել Պարսից արքունիք, որը լավ արդյունք է ունեցել, քանի որ [Իսրայել Օրին] կասկածի ենթարկվելով արքունիքում, այնտեղից վերադարձել է Եվրոպա՝ անցնելով Վրաստանով և Մոսկվայով:

Մեկ օրինակ ուղարկիր վերոնշյալ Տեր Հորը:

---

[20] Հավանաբար նկատի ունի Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ին:

[21] Հավանաբար նկատի ունի Կղեմես XI-ի նամակը, որով Հռոմի պապը Պարսից շահին հայտնում է, որ չի սատարում Իսրայել Օրուն: